

համար՝ «Լեալ կրօնաւոր թաղեցաւ ի սուրբ ուխտն Գրազարկ» (անդ, էջ 355):

Կիլիկիայի ժամանակագիրը կը հաղորդէ «Եւ տարան զՋապէլ (Բ.) ի Գրազարկն, զի է նա տեղ եւ զիր հանգստեան թաղաւորացն Հայոց եւ հայրապետաց, վասն երկիւղին աւորինաց զի նեղ եւ նուրբ է ճանապարհն եւ ի Սսու աւելի քան զմիոյ աւուր ճանապարհն» (Միսուան, էջ 545):

Նաեւ եկեղեցականներու դամբարան էր Գրազարկ եւ այդ հասկնալի՝ նախ միարաններու ապա ուրիշ կրօնականներու: Ուստի հայեցին կը զրէ. «Եւ կոչեցաւ վանքն այն գերեզմանատուն սուրբ վարդապետաց» (Պատմ., էջ 461): Գարձեալ՝ «Մեռաւ ամենագովելին Բարսեղ վարդապետն եւ թաղեցաւ ի վանքն Գրազարկ, ուր են գերեզմանք սուրբ վարդապետացն նմանաց իւրոց» (անդ, էջ 546): Հոն կը թաղուին Գրիգոր Տղայ, Գրիգոր Բարսեղ, Յովհաննէս Ե. Մեծարարոյ, Կոստանդին Ա. Բարձրաբերդցի, Կոստանդին Գ. Լամբրոնացի եւն եւն (հմմտ. ի Recueil des Historiens des Croisades, documents arméniens, t. I. էջ 630, 631, 669, Կիլիկիայի ժամանակագրութեան մէջ (Մարտ Գունդատապլ) եղած տեղեկութիւնները, որոնցմէ է նաեւ թէ Գրազարկի մէջ «Բացին զհողն տէր Կոստանդին Բարձրաբերդցի կաթողիկոսին, նա դասն զուրջասն փտած եւ զգալին խայտնին չէն եւ զգաւազանն եւ զմազն եւ ոսկր ամենեւին ոչ գտան»):

3. ԳՐԱԶԱՐԿԻ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԸ ԵՒ ՄԵՐԱՆՆԵՐԸ
Անձանօթ է, կը զրէ Հ. Ալիշան, ժամանակ հիմնարկութեան վանացն — Գրազարկայ — եւ թուի կանխել քան զԹուրքիներն եկաւորութիւն, նա զի եւ թորոս Ա. նորոգող նորին կոչի ի սկիզբն ԺԲ. դարու ի ձեռն երկուց վարդապետաց (Միսուան, էջ 231):

Հետեւեալ Յիշատակագրութիւնը Գրազարկի գոյութիւնը կամ հաստատութիւնը կ'ուզէ հաստատել 893 տարիէն առաջ: Կը զրուի. Գրեցաւ ի ձեռն Միկրոսիսի սուրբ Աւետարանս ի հրեշտակախօս մենաստանին Գրազարկի առաջի սուրբ Աստուածածնի եւ սուրբ եղբայրութեանս միջի, թուականս Հայոց նոր տոմարիս ՅՈՒՅՑ (893) ի թագաւորութիւն Հայոց Մարտայ որդւոյ Աշոտոյ Բագրատունւոյ ի տոհմէ կաթողիկոսութեան տեան Գէորգայ Գառնեցոյ: Յորում ամի

կործանեցաւ Դըւին քաղաք ի շարժմանէ եւ րազումք մեռան եւ եկեղեցիք տապալեցան: Այս իրս գործեցաւ վասն ծովացեալ մեղաց մերոց... (հմմտ. Յովսէփեան, Յիշատ. Ձեռ., Ա., էջ 99):

Յիշատակագրութիւններու յօրինուածութեան ծանօթ մը շուտով կը միտի ըսելու թէ կեղծիքի մը առջեւ կը գտնուինք եւ արդէն շատոնց ցուցուցած է համոզիչ կերպով Հ. Ն. Ակիւնեան, որ այս յիշատակագրութիւնը կարկտանք է եւ 1113ին գրուած յիշատակագրութեան մը (հմմտ. վարը) վրայէն ձեւաւորուած՝ շատ անճարակօրէն (Հանդ. Ամս. 1917—1918, էջ 160):

Ուստի այդ յիշատակագրութեան Գրազարկի հիմնարկութեան ժամանակի մասին լոյս չի ծագիր:

Յենլով կամ կուսան ունենալով Մատ. Ուսուցիցի հուսատիքը թէ «Ձոր (Գրազարկ) նորոգեաց մեծ իշխանն Հայոց Թորոս» (Պատմ., էջ 418), անվարան կրնանք ըսել թէ Գրազարկ յունական հին վանք եղած է եւ Թորոս զայն նորոգելով Հայերու կը փոխանցէ: Հոն կը հրաւիրէ ժամանակին անուանի գոյգ վարդապետները Գէորգ եւ Կիրակոս:

Գէորգ վարդապետ իր քաղցրաբարոյ բնավորութեան եւ մեղրահոս լեզուին պատճառով կոչուած՝ Մեղր կամ Մեղրիկ վարդապետ, Վասպուրականցի է՝ ծնած ըլլալով սոյն նահանգի Ալիւր գիւղը, 1044ին կամ 1045ին: Հաւանօրէն նկատելով որ Կիլիկիայի մէջ Հայութեան կը բացուէր նոր արշալոյս, կը մեկնի Կիլիկիա, ուր այլ եւ այլ վանքերու մէջ ընտիր գործունէութեան վերջ՝ կը հաստատուի Գրազարկ եւ հաւանօրէն կ'ըլլայ անոր առաջնորդը հակառակ իր խոնար-

² Թորոս Ա. ի համար Վահրամ կը զրէ՝ Չեկեղեցիս բազում շինեալ. եւ վանորայս յոյժ հոշակեալ, Յորոց Գրազարկն մակագրեալ եւ Մաշկեւորն անուն ձայնեալ եւ այլ բազումք որ հաստատեալ եւ պաղեօք փարթմացեալ. Սա սոյսիսի կենօք կեցեալ եւ առ Բրիտանոս վերափոխեալ ի սուրբ ուխտին տապան եղեալ Որ է Գրազարկ անուն կոչեցեալ:

(Recueil des Historiens des Croisades, documents arméniens, tome premier, Paris 1869, էջ 499, որ եւ Թորոս Բ. ի համար կ'ըսէ Որովք առ նա եղև փոխեալ եւ ի Գրազարկն հանդուցեալ, էջ 508, որ նաեւ Ռուբէնի համար Յորժամ գմահու բաժակն արբեալ, սա ի Գրազարկն եղև թաղեալ, անդ, էջ 510:)

համարութեան եւ փառքէ խուսափելուն: Կը մեռնի 1155 (հմմտ. մենագրութիւններ Հ. Ն. Ակիւնեանէ, Մատենագրական հետազոտութիւններ, Ե. հատոր, Վիեննա 1953, էջ 107—136): Կը թաղուի Գրազարկի մէջ, ուր գրուած եւ առաջին անգամ կարդացուած է իր՝ «Մատենան պաղատանաց սուրբ վարդապետի Մեղրիկայ զինի երկց իւրոց յաշխարհէ...: Այս իմ գիր ողջունի եւ պատանաց է մեղապարտ եւ սրուպ ծառայի գատանաց է մեղապարտ եւ սրուպ ծառայի մաւրէն Եղբայրութիւնը» (անդ, էջ 129):

Մինչ Թորոս Գրազարկի արտաքինը կը նորոգէր եւ ներքինին նորոգութիւնը կը ցանկար, զայն զլուխ կը հանէ Գէորգ Մեղրիկ: Նախ իր օրինակելի եւ ճշմարտական խիստ կենցաղով Գրազարկի մէջ կը հաւաքէ «գաւազան զասս ճղնաւորացն Գրիստոսի եւ մենայն դասս ճղնաւորացն Գրիստոսի եւ ասպա՝ հաստատեաց անդ կարգ եւ կրօնք գաւազին սրբոց հարց» (Ուսուց., էջ 366⁴):

Եւ որպէս զի իր տուած կանոնները մուսուլթեան չենթարկուին՝ «Եդ գասմանս կանոնի նոցա գրաւորական հաստատուութեամբ, որ կայ մինչեւ ցայսօր» (Միսուան, էջ 231):

Ի՞նչ են արդեօք այդ կանոնները: Անոնց ամփոփումը կու տայ Կիրակոս Գանձակեցի՝ «Սա կարգաւորէ զհոշակաւոր ձակեցի՝ Սա կարգաւորէ զհոշակաւոր ուխտն, որ կ'ընէ Գրազարկ. Անդադար լինել ի պաշտօն զցայս եւ զցերեկ եւ հանապաղ ի պաշտօն զցայս եւ առանձինն ումեք ոչ ինչ պահօք կատարել եւ առանձինն» (Պատմ., լինել լոյս ի հասարակաց տանէն» (Պատմ. էջ 62—63⁵), զոր կ'անուանէ՝ «Չատուցեալ էր սրբարան» (Մատ. հետազոտ., Ե., էջ 130): Վերոյիշեալ գրութեան մէջ Մեղրիկ վերջին անգամ իր կանոնագրութեան կարեւոր կէտերը կը շեշտէ՝ «Ով սիրելի եղբայր, զգուշացարուք կենաց ձերոց, մի սիրէք զանտախի եւ զունայն զի ցաւօք կեանս զայս եւ մի զկորուածի ողբոցն զհեշտութիւն մարմնոյ եւ մի ազահութեան եւ իշխանախորութեան զհեա երթայցէք, եւ մի ի ճամբարտ խոտոս վանութեանէն, ի պահոց եւ յաղաթից թուրանայք եւ մի ոք ոխակալութեամբ եւ հեռի գտանիցի...» (անդ, էջ 135):

³ Կ'որոշէ եւ կը սահմանէ ընթերցումները: ⁴ Հմմտ. Յովսէփեան, Յիշատ. Ձեռ., Ա., էջ 305, 325—326 եւ Սաշիկեան, ԺԵ. դարի Հայ. Ձեռ. Յիշատ., Ա., էջ 246. Մարտայ, էջ 78 եւն եւն: ⁵ Հմմտ. եւ վարդան, Պատմ., էջ 117:

Յաւալի է որ Մեղրիկ վարդապետի այս կանոնագրութիւնը մեր ձեռքը չէ հասած եւ կամ դեռ երեւան չէ եկած:

Գէորգ վարդապետի համաշունչ գործակից է Կիրակոս Գիտնական վարդապետը, որ նմանապէս Հայաստանէն Կիլիկիա կը հաստատուի եւ տարիքով աւելի փոքր է ծնած ըլլալով հաւանօրէն 1050ին: Ձէ կարելի ստուգապէս ըսել թէ Կիրակոս Ե՞րբ Գրազարկի անդամակցեցաւ, սակայն այն յայտնի է որ 1113ին Գրազարկի մէջ է եւ դժբախտութեամբ կ'ունենայ յաջորդ տարին իր սրտակիցը — Գէորգ Մեղրիկ — կորսնցնելու: Չունիմ որեւէ ապացոյց, բայց անհաւանական չէ որ անոր յաջորդ ընտրուեցաւ Կիրակոս, որուն մասին սա գեղեցիկ վկայութիւնը կու տայ Մ. Ուսուցիցի՝ «Քսի ի թուականութեանն Հայոց ՇՀՁ մեռանէր սուրբ վարդապետն Հայոց որ ասի Կիրակոս — այս է Կիրակոս — նմանեալ առաջին սրբոցն, ուսեալ զամենայն Կառկապիտան Աստուծոյ եւ ամենայն խորին քննութեամբ հասու եղեալ լիապէս հասեալ ի վերայ Հին եւ Նոր Կառկապիտան Աստուծոյ, ընկերակից Գէորգայ վարդապետին, որ ասի Մեղրիկ» (Պատմ., էջ 366):

Կիրակոս՝ զրէի հասնելի եւ բաւական ատատ հունձք մը կը կառնէ յետագայ սերունդի, այսպէս՝ Սրբագրութիւնք Գործք Առաքելոցի Մեկնութեան թարգմանութեան, սրբագրութիւն Յովհաննէս աւետարանի Մեկնութեան թարգմանութեան. Տօնամակի կամ ծառայի լրացում, Շարական Արեւելք գերարիւն եւն եւն (հմմտ. մանրամասնօրէն Մեկնութիւններ, Ե., էջ 247—336): Գրազարկի տոնչութեամբ Մամուկէ Անեցի կը հաղորդէ «Ի ՇՀ — 1121 — թվին վարդապետն Կիրակոս կանոնադիրն Գրազարկուն հանգեալ ի Գրիստոս» (Ժամանակագրութիւն, էջ 128):

Ինչպէս կը տեսնուի հոս չիտթութիւն մը կայ Գէորգի գործը Կիրակոսի կը վերաբերուի, թէ եւ անհաւանական չէ որ երկու համամիտներն ու համախորհրդները իրարու հետ սոյն հարցերու շուրջ խորհրդակցած են: Հակառակէն Կիրակոսի Յայտնաւորքի եւ ձառնցի մէջ ունեցած զերն ալ Գէորգ Մեղրիկի վերագրուած է» (հմմտ. Տաշեան, Մայր Յուց., էջ 251. հմմտ. եւ Աճառեան Հ., Յուց. հայ. Ձեռ. Թաւրիզի, էջ 113):

Դրագրակի մէջ ապրած է նաև Բարսեղ Պիաւեցին՝ «Էին արք անուանիք ի միում ժամանակի յերկրին Տարսնացւոց ի լեռնն Սեաւ եւ ի լեռնն Կարմիր եւ ի Սորին առնապատն Դրագրակն Բարսեղ Պիաւեցին, որ հոչակելին էր եւ սքանչելի վարուք, որ կարգաւորէր զուխն իւր, ոչ ճաշակեալ միս բնաւ եւ ոչ կիթ, բայց ի տաւնի եւ կիրակէի ձէթ միայն: Եւ կարգեալ ցայգապաշտուն յամենայն կիւրակամտի, որ կայ դեռ եւս կարգաւորութիւն կանոնին ի նմա» (Յովսէփեան, Յիշատ. 2և., Ա., էջ 341): Կը յիշեցնէ Գէորգի կանոնագրութիւնը Կիրակոս վարդապետի առաջնորդութիւնը՝ կա՛մ պէտք ենք ընդունել թէ կարճատեւ եղած ըլլայ եւ կա՛մ նոյն իսկ պէտք ենք մերժել, զի արդէն 1123ին Թաղէոս Եւագրի մէկ գործը կը ստանայ Յովհաննէս ընտրեալ քաւչապետ առաջնորդի համար (Յիշատ.): Տարիներ յետոյ Դրագրակի ղեկավարութիւնը կը յանձնուի Բարսեղ վարժապետի, որ գիտուն է եւ առաջնորդի մը յատուկ առաւելութիւններով օժտուած (Յիշատ. 1163—1176): Անոր անմիջական յաջորդը կրնայ նկատուիլ Սամուէլ, որուն օրերուն 1178—1181 թորոս Դրագրակի մէջ արտագրութիւններով կը գրադի (Յիշատ. 1178—1181 տ.): Լեւոն Գաղաթործի եւ Մեծագործի թագադրութեան հանդէսին ներկայ է Տէր Յովհաննէս արքեպիսկոպոս Սոյ եւ առաջնորդ Թրագրակուն (Սիսուան, էջ 470 եւ 505), որ կարճատեւ ժամանակով կաթողիկոս կ'ըլլայ եւ ապա կը վերադառնայ իր վանքը եւ անոր առաջնորդութիւնը կը ստանձնէ, զոր կը վարէր իր բացակայութեան Հեթում-Հեղի (Սիսուան, էջ 505):

Ստուգութիւն չունիմ թէ 1217ին Յիշատակագրութեան մը մէջ անուանուած տէր Գրիգոր Դրագրակի առաջնորդ եղած ըլլայ (Յիշատ. Գ.) մանաւանդ որ Ալիշան Հեթում Հեղիի պաշտօնավարութիւնը կ'երկարաձգէ մինչեւ 1218 (հմմտ. Սիսուան, էջ 505):

Ապա Դրագրակի միարանները կը հովուէ ու կը կառավարէ Բարսեղ եպիսկոպոս, որ «մեծ եւ գերամաքուր» եպիսկոպոս է վարքով ու տոհմով (Յիշատ. 1220, 1241 տ.):

Յիշատակագրութեան մը մէջ, որ 1276ին գրուած է (Յիշատ. ԺԵ.) սոյն տարւոյն արգէն հանգուցեալ կը հաղորդուի Բարսեղ, բայց անկէ առաջ 1273ին գրուած ուրիշ Յիշատակագրութեան մը մէջ (Յիշատ. ԺԵ.

ծան. 1) կը խնդրուի Յիշեցէք եւ զհայր Թաղէոս զհայր Աւագ անապատին, որ զաւրինակս չնորհեաց (Սիսուան, էջ 154 եւ Ակիւնեան Հ. Ն., Մատ. Հեա., էջ 171), եթէ ակնարկութեւնը Ակիւնի վրայ չէ, ուր Գրիգոր Զեռագիր մը կը գրէ:

Հ. Ալիշան Դրագրակի առաջնորդ զիտէ 1301ին Յովհաննէս (Սիս., էջ 234) եւ ապա անոր յաջորդ՝ Կոստանդին, որ Կաթողիկոս եւս կ'ըլլայ: Անոր առաջնորդութեան շրջանին 1305ին Դրագրակ թշնամիներու նշաւակ կ'ըլլայ. «Բազում ինչ պարտ էր գրել վասն այսորիկ...: Զի յայսմ աւուր եւ ի ժամուս լեցաք թէ զԴրագրակն անաւրէնք այրեցին» (Հաւաք. Յիշատ. Ակիւնեան, Վիեննա, 324): Կոստանդինի առաջնորդութիւնը երկարաձիգ կ'ըլլայ (Յիշատ. ԻԱ. եւ ԻԶ):

Փոս վանքի եւ Դրագրակի առաջնորդութիւնները կը վարէ ժամանակ մը Հայրապետ վարդապետ (Յիշատ. Լ. եւ Ալիշան, Սիսուան, էջ 234):

Յետագային կը յիշուին Ստի արքեպիսկոպոսներէն Բարսեղ (Յիշատ. ԼԳ.) բայց նախ Յովհաննէս (1272ին), որոնք կրնան եւ Դրագրակի առաջնորդ եղած ըլլալ, քանի որ Սիսի եպիսկոպոսանիստը ընդհանրապէս Դրագրակ վանքն էր: Բայց պէտք է նկատի ունենալ որ 1271ին Դրագրակի եպիսկոպոս կը յիշուի Գրիգոր (Յիշատ. ԺԵ.) իսկ միւսներու համար հմմտ. Սիս., էջ 234:

Այս եւ ուրիշ առաջնորդներու ղեկավարութեան տակ Դրագրակի միարանները կը ջանան իրենց ժամանակը արդիւնաւոր անցնել եւ կը նուիրուին գիտութեան, գրչագրութեան ու մանրանկարչութեան:

Հոն կը ծաղկին Գէորգ Մեղրիկ ու Կիրակոս վարդապետները — գէթ իրենց կեանքի վերջին տարիները:

Հոն կ'ապրի ժամանակ մը (1220ին) վարդան Այգեկցի նշանաւոր առակապիրը (Տաշեան, Ժողովածոյք Առակաց վարդանայ, էջ 59):

Դրագրակի նշանաւոր անձերէն է Թորոս, որ երաժիշտ է եւ դասապետ, զոր Լեւոն Գ. Անգլիա կը յղէ իբրեւ ղեկավար: Հ. Ալիշան կը միտի զինքը նոյնացնել Թորոս Թափրոնցիի հետ (Սիսուան, էջ 234—235):

Իսկ անոր ամէնէն ակնաւոր նկարիչն ու ծաղիկոյն է Սարգիս Պիծակ, որուն նկարագրը Զեռագիրներէն բաւական թուով հասած են: Յատկապէս յիշելու եմ վենե-

տիկի ԺԲ. Աւետարանը, որ հայ մանրանկարչութեան զեղեցիկ նմոյշներէն է մանաւանդ զոյներու համադրութեամբ եւ ոսկիի զործածութեամբ (Ալիշան, Սիսուան, էջ 234—235 եւ Սարգիսեան, Մայր Յուց., Ա., էջ 431—434. հմմտ. Սարգիսի կեանքի եւ էջ 431—434. հմմտ. Սարգիսի կեանքի, ամմանրանկարչութեան մասին՝ էջմիածին, ամսագիր, 1953, Թ. 9, էջ 45—50. Թ. 10, էջ 30—35 եւ Թ. 11—12, էջ 30—40):

Թէ Դրագրակի վանքը ե՞րբ եւ ի՞նչ պարագաներու տակ իր կենսունակութիւնը կ'որսնցուց եւ փլատակներու վերածուեցաւ, չենք գիտեր:

Անոր կենսունակութեան եւ արգասաւորութեան խօսուած ապացոյցներ են հոն գրուած Զեռագիրները, որոնց յիշատակութիւնները յառաջ կը բերեմ քաղերով ցուցակագրութիւններէ եւ գրքերէ:

(Շարունակելի): 2. 2. ՈՍԿԵԱՆ

ՅՈՒՅՐԿ ՀՈՅԵՐԷՆ ԶԵՌԸԳՐԵՑ ԵՐԿՈՍԻՑԵՐ Ի ԿԻՊՐՈՍ
(ՍԵՃՄ ՓՈԽԵԳՐՈՒՄ ԵՆ Թ.Ի.Ի.ԵՍ, ԿԵԹՐՂԻԿՈՍԵՐԵՆ)
(Շարունակութիւն):

ԴԱԻԹԻ ՆԵՐԳԻՆՍՏԻՈՅ ԵՒ ԱՅԼՈՑ ԿԵՐԼՈՒԹՈՒԹԻՒՆՆԵՐ
Հին Թիւ 28: ՌձԼԹ = 1690:

ԹՈՒՂԹՔ՝ 295: — ՄԵՄՈՒԹԻՒՆ՝ 20 X 14,3 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ միախմբ: — ՆԻԹ՝ բուրգ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂ. ՊԱԶՊԱՆԿ՝ չուրի: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ խոնարհութիւն: — ԴԱՏԱՐԿ՝ ԲՂ. 1—3, տարեկէ բերել վնասուած: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՒՅ՝ 193—195: — ԳԻՐ՝ նստրագիր: — ԽՈՐԱՆ, ԿԻՍԱՆՈՒՅ՝ ԲԱՆՆԱՐ, ԶԱՐԳԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՅԱԶԱՐԿ՝ կը բացակային: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԿ՝ 1690: — ՏԵՂԻ՝ եջմիածին: — ԳՐԻԶ՝ զուկապ դպիր:

Մատենան է Հաւաքածոյ Իմաստասիրականաց. ուր կան.

- 1. Թղ. 4ա. Ներածութիւն Պորփիրի:
- Եւրջը հարկաւորի...:
- 2. Թղ. 10բ. Դաւթի փիլիսոփայի Ներգիւնացի վերլուծութիւնը Ներածութեան Պորփիրի: Հանդերձեալը հանդերձ Աստուծով...:

3. Թղ. 43բ. Ստորագրութիւնը Արիստոտելի: Հոմանունը ասին... (Բնարանը հանդերձ մեկնութեամբ):

4. Թղ. 90բ. Սկիզբն եւ Նախադրութիւնը գրոցն որ ասի ըստ Յունացն Պէրիարմէնիաս եւ հայերէն Յաղագս Մեկնութեան, արտադրեալ ի մեծ իմաստնոյն Արիստոտելի. թարգմանեալ եւ մեկնեալ ի Դաւթի Ներգիւնացւոյ: Նախ արժան է զնել...:

Թ. 1—4. Դաւթի Անյաղթի Մատենագրութիւնը, Վենետիկ 1833, էջ 227—553:

5. ա. Թղ. 126ա. Այս ինչ է ի բնաբանն Պորփիրի...:

Բ. Թղ. 127բ. Նորին Գրիգորի աշակերտի համառոտ տեսութիւն ի գիրս Պորփիրի...:

Գ. Թղ. 134ա. Նորին Գրիգորի Լուծումն համառոտ ի տեսութեան Դաւթի...:

6. Թղ. 155ա. Դաւթի փիլիսոփայի Առածք հինգ (Հրտ. անդ, էջ 217—224):

7. ա. Թղ. 158բ. Այս ինչ է ի գիրս Ստորագրութեանց:

Բ. Թղ. 159բ. Եռամեծին Յոհաննու Հայոց փիլիսոփայի եւ վարդապետի Հաւաքումն համառոտ վերլուծութեան Ստորագրութեանցն Արիստոտելի ի Գրիգորի աշակերտէ: Ստորագրութիւնը վասն այն կոչին...:

Գ. Թղ. 202բ. Նորին Յոհաննու Որոտնացի համառոտ Լուծումնը Պերիարմէնիաս գրոցն, ի Գրիգորի աշակերտէ: Սկիզբն եւ Նախադրութիւն...:

8. Թղ. 249ա. Յաղագս Քերականութեան ասի, ով մարդ: Քերականութիւն է գիտութիւն տառից եւ ասութեանց եւ կիրառութեանց...: (Սիմէոն Զուղայեցւոյ):

9. Թղ. 264ա—293ա (Այլ գրէ). Յաղագս Քերականութեան համառոտ Լուծումնը ի տէր Առաքելի Սիւնեաց եպիսկոպոսէ...: Նախ պարտ է գիտել...: Կարտի այսպէս. Եւ որ ԳԹ. Թիւ մի գէմ ասէ, Սարեղին, որ մի անձն ատոյց (°) եւ Գ անուն. այլ այս է Գ զիմացն Գ թիւ է եւ Գ թիւն Գ |||||: Այս քան առ այս:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ. 1. Թղ. 247ա. Ի թուականութեան Հայոց երկբարից հարիւրոց եւ եռակից հարիւրոց եւ երկից տասնից եւ իննից թուոց (ՌձԼԹ = 1690) եւ հաւաքեալ եղեւ Պորփիրոս, Ստորագրութիւնս, Պերիարմէնիաս Բնաբանովն, Մեկնիչովն, Լուծումն (ն)կովն հանդերձ Քերականովս: